



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnikgyuxapetaran2011@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունվարի 2014 թվականի N 1-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 3 կետի պահանջներով, ավագանին որոշում է՝

Համայնքի ավագանու 13.12.2013 թվականի թիվ 21-Ն նիստում հաստատված համայնքի 2014 թվականի բյուջեյի ֆոնդային մասում կատարել փոփոխություններ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման՝

1. Ֆոնդային բյուջեյի եկամտային մաս.
 - ա/ Վարչական բյուջեյի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 439.5 հազ. դրամը, մուտքագրել ֆոնդային բյուջեյի եկամտային մաս:
 - բ/ Ֆոնդային բյուջեյի մնացորդից՝ 10474.7 հազ. դրամից, պակասեցնել 195.0 հազ. դրամ: Ֆոնդային բյուջեյի ազատ մնացորդը 01.01.2014 թվականի դրությամբ՝ 10279.7 հազ. դրամ: Ընդամենը ֆոնդային բյուջեյի եկամտային մասը կազմում է՝ 10719.2 հազ. դրամ:
2. Ֆոնդային բյուջեյի ծախսային մաս.
 - 09.8.1 Կրթություն /այլ դասի չպատկանող/
 - 5112 շենքերի շինությունների կառուցում հոդվածին ավելացնել 244.5 հազ. դրամ:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆՍՈՆ

2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՆՎԵԼ

3. ՄԱՐԿԱՐՅԱՆ ԱՇՈՏ

4. ՄԱՐԿՈՍՈՎ ՅՈՒՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՆԱԾԻՑ
ԱԶՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

